

1881

Մեր ծխական տարրական դպրոց-
ներում պարապելու նպատակա-
յարմար կարգը ու պարապմունք-
ների արդիւնաւէտութեան անհրա-
ժեշտ պայմանները.

ԳԻՆՆԷ 15 ԿՈՊ.

Բ. Տէր-Սահակեանի, Շուշում.
1908

12836

1282
1282
1282

Մեր ծխական տարրական դպրոցներում
պարապելու նպատակալարմար կարգը ու
պարապմունքների արդիւնաւէտութեան
անհրաժեշտ պայմանները.

I.

Մեր ծխական դպրոցները, մանաւանդ գիւղա-
կան դպրոցները, ինչպէս յայտնի է, իրենց կազ-
մով մեծ մասամբ միդասեան են, երեք բաժան-
մունքից բաղկացած: Դպրոցի միակ ուսուցիչը
ստիպւած է պարապել երեք բաժանմունքի հետ
էլ, պարապել, ձգտելով բաւարար հետեւանքների.
Լե նա պարապում է, ենթարկելով թէ իրեն և
թէ իր մանուկ սաներին դժուարին տանջանքների:
Այդ տանջանքները առաջ են գալիս հետեւեալ կար-
գից. մի դասարանական սենեակում տեղաւորում
են երեք բաժանմունքն էլ, բաժանւած երեք
խումբ նստարանների վրա. ուսուցիչը միաժամա-
նակ զբաղեցնում է բոլորին էլ. 60 րոպէ տեղ-
ղութիւն ունեցող դասը նա բաժանում է երեք
մասի, 20 րոպէ նւիրում է I-ին բաժանմունքին,
20 II-դին ու 20 էլ III-դին. երբ անմիջապէս
պարապում է մի բաժանմունքի հետ, մնացած

երկուսին որ և է գրաւոր զբաղմունք է տալիս (արտագրումն գրքից կամ գրատախտակից, թւաբանական վարժութիւններ, գծագրութիւն և այլն): II-դ կամ III-դ բաժանմունքի հետ պարապելիս ուսումնական տարւայ առաջի կիսամեակում համարեա ոչ մի հնարաւորութիւն չի լինում I-ի բաժանմունքը որ և է գրաւորով զբաղեցնել, քանի որ այդ բաժանմունքի սկսնակ երեխաները այդ շրջանում այնքան իւրացրած չեն լինում գրելը, որ կարողանան առանց ուսուցչի անմիջական ղեկավարութեան որ և է բան գրել իրենց տետրակներում: Նրանք սովորաբար մօտ 40 բոլորէ անգործ նստում են դասատանը, ոչինչ չհասկանալով այն դասախոսութիւնից, որը ուսուցչիչը անում է II-դ կամ III-դ բաժանմունքի համար. ձանձրոյթից նրանք յօրանջում են, բօթում են իրար, չարութիւն են անում, քրքրում են իրենց դասարանական իրերը, այս կամ այն իրը անփոյթ ձեռնահարելուց վայր գցում գետնին, աղմուկ բարձրացնում, խանգարում ուսուցչին, որը յաճախակի դիմում է նրանց, պահանջելով սուս կենալ, հանգիստ նստել, կարգ պահպանել, չը խանգարել. երեխաները մի երկու բօլետով հանգստանում են, ահաբեկւելով ուսուցչի զրգուլած դէմքից ու խրոխտ ձայնից, ու դարձեալ սկսում են իրենց անմեղ, անգործութիւնից բղիտոյ, չարութիւնները: Եթէ փորձում է ուսուցիչը նրանց

դուրս ուղարկել, որպէսզի II-ին ու III-դին չը խանգարեն, հետեւանքները աւելի վատ են լինում. գրսում նրանք վազվզում են, աղմուկ են բարձրացնում, կուտակվում են դասարանի լուսամուտների առաջ ու այդպիսով աւելի խանգարում ուսուցչին, քան դասարանում եղած ժամանակ: Այդ պատճառով ուսուցչիչները գերադասում են նրանց դասատանը պահել ու մի կերպ տանել նրանց չարութիւնները, քան ուղարկել դուրս: Պատարանական կարգապահութիւնը նկատելի չափով չէ բարւոքւում նոյն իսկ երկրորդ կիսամեակում, երբ առաջինեցէք քիչ-չատ ընդունակութիւն են ձեռք բերած լինում զբաղել գրաւոր վարժութիւններով առանց ուսուցչի անմիջական ղեկավարութեան ու հսկողութեան. երեք բաժանմունքի միաստանակ զբաղեցնելը մի դասարանական սենեակում, ինչքան էլ աշակերտները ընդունակ լինին ինքնուրոյն աշխատանքի, դա մի տաժանակիր աշխատանք է, որը ծանօթ է այն ուսուցչիչներին միայն, որսնք իրենց կաշւի վրա զգում կամ զգացել են: Նրա անտանելի ծանրութիւնը: Պեռ լաւ է, եթէ ծխական խղճուկ, աղքատիկ դպրոցն ունի այնպիսի դասարանական սենեակ, որի մէջ միաժամանակ կարողանում են տեղաւորւել երեք բաժանմունքն էլ. պատահում է այնպիսի դպրոց, որտեղ բաժանմունքները տեղաւորւում են երկու կից սենեակ-

ներում, մէկում երկուսը, միւսում մէկը: Այդպիսի պայմաններում դասարանական կարգապահութիւնը աւելի վատթար, աւել խնտանելի է լինում. ուսուցչի մի սենեակում եղած ժամանակ միւսում մանկական չարահաճութիւնը անարգել արտայայտուում է առանց չափ ու սահմանի. ուսուցչիչը ստիպւած է լինում յաճախակի մտնել աղմկայոյզ սենեակը ու կարգի հրաւիրել ձանձրոյթից չարութեան գիրկն ընկնող երեխաններին. այդ րօպէին նրա թողած սենեակումն է կարգը խանգարուում. ուսուցիչը շտապով վերադառնում է այնտեղ, կարգի հրաւիրում սաներին ու շարունակում ընդհատուած պարապմունքը: II-դ, նոյն իսկ III-դ բաժանմունքի աշակերտները այնքան պատրաստականութիւն չունեն, որ կարողանան բոլորովին ինքնուրոյն կերպով պարապել իրենց տւած գրաւորով ու չը խանգարել ուսուցչին, երբ նա պարապում է առանձին ու անմիջապէս երեք բաժանմունքից որ և է մէկի հետ: Եթէ միմիայն նրանք լինեն դասարանական սենեակում (II-դ ու III-դ բաժանմունքները), այն ժամանակ զգալի չափով հեշտ է պարապելը ու կարգ պահանջելը. մի բաժանմունքի հետ անմիջապէս պարապելիս ուսուցիչը իր աշակերտութեան ու ուշադրութեան մի մասը միւս բաժանմունքի (գրաւորով պարապող) վրա ունի դարձրած, այլ ոչ երկուսի ինչպէս այն գէպքում, երբ

երեք բաժանմունքն էլ նա ստիպւած է միաժամանակ զբաղեցնել: II-դ ու III-դ բաժանմունքների աշակերտները գրաւորի ժամանակ յաճախակի դիմում են ուսուցչին հարցերով. վերջինս նրանց բացատրութիւններ է տալիս, մօտենում է սրա կամ նրա տետրակը շտկում, նստածքը կամ անկանոն դիրք ունեցող իրանն ուղղում: Այդպէս հնարաւոր է քիչ-շատ բաւարար կերպով տանել պարապմունքները II-դ ու III-դ բաժանմունքների հետ, իւրաքանչիւր դասին յատկացրած ժամանակը կիսելով երկուսի մէջ, մէկի հետ անմիջապէս պարապելիս միւսին որոշ չափի վերահսկողութեան ներքոյ զբաղեցնել որ և է գրաւոր պարապմունքով. իսկ երբ նոյն դասարանական կամ կից սենեակում ներկայ է լինում նա և սկսեակ բաժանմունքը, I-ը, որին միւսնոյն դասից ուսուցիչը պէտքէ առանձնակի որոշ ժամանակ յատկացնի, մնացած ժամանակը, մինչև դասի վերջը հետևի նրանց կարգապահութեան, քանի որ ինքնուրոյնով, գրաւորով, նրանց զբաղեցնելու ոչ մի հնարաւորութիւն չի լինում համարեա, մանաւանդ I-ի կիսամեակում, այն ժամանակ II-դում ու III-դում էլ հնարաւոր չէ լինում քիչ-շատ բաւարար տանել գործը, ոչ մի բաժանմունքում պարապմունքները ցանկալի կանոնաւորութեամբ ու արդիւնաւէտութեամբ չեն ընթանում. ուսուցիչը սաստիկ ջլախնաւում է, կոր-

ցնում հանգիստ, խաղաղ, դէպի ստանձնած նւիրական գործն ու իր սաները բարեացակամ, սիրալիր տրամադրութիւնը, առանց որի անհնարին են արդիւնաւէտ պարապմունքները. նա յաճախակի կորցնում է իր պաշարիւնութիւնը ու այդ գրութեան մէջ ակամայ դիմում, այսպէս ասած, ֆիզիքական ներշնչումների, ծեծի ու հայհոյեանքների նոյն խոյ, այնպիսի «գաստիարակչական» միջոցների, որոնք վաղուց են դատապարտւած մանկավարժական դիտութեան կողմից ու որոնց ամենաթույլ նշույն անգամ չը պէտք է լինի դպրոցում: Ժամանակակից ուսուցիչները, համարեա բացառապէս բոլորն էլ, դէմ են խալիֆայական գաստիարակչական միջոցների գործադրւելուն դպրոցում, բայց տարրական աղքատիկ դպրոցի վերև նկարագրած դառն իրականութիւնը ստիպում է շատերին դիմել այդ միջոցներին, ակամայ, 'ի հարկէ, սառնակ դրդուած, անչափ ջղայնացած գրութեան մէջ. . .

II.

Վերև ասացինք, որ 60 րոպէ տևող դասը ուսուցիչը բաժանում է երեք մասի, յատկացնելով իւրաքանչիւր բաժանմունքին 20 րոպէ: Ամեն մի դասից ընդամենը 20 ր. նւիրելով այս կամ այն բաժանմունքի աշակերտների հետ անմիջապէս պարապելուն, մնացած 40 րոպէն ուսուցիչը թողնում

է նրանց տրամադրութեան տակ. թէ ինչպիսի ձանձրոյթ ու յոգնածութիւն են պատճառում մանկահասակ աշակերտներին այդ երկարատև րոպէները ու ինչպիսի իրականութիւն ստեղծում դասատան մէջ, այդ մասամբ նկարագրած է վերևում ու հասկանալի է և երևակայելի առանց մանրամասը նկարագրութեան էլ: Թէև իւրաքանչիւր բաժանմունքի հետ անմիջապէս պարապելուն ուսուցիչը նւիրում է 20 ր., բայց ոչ մի հնարաւորութիւն չունենում *անընդհատ* պարապել, այդ 20 ր. ամբողջովին գործադրել պարապմունքի վրա. նա յաճախակի ստիպված է լինում ընդհատել պարապմունքը ու դիմել միւս բաժանմունքներին՝ նրանց մէջ խանգարւած կարգը վերականգնեցնելու նպատակով, այս ու այն անկիւնում ծաղող աղմուկը դադարեցնելու համար. այդպիսով այս կամ այն բաժանմունքին յատկացրած 20 րոպէից իսկական պարապմունքին հազիւ բաժին է ընկնում 10-15 րոպէ ու այն էլ ոչ անընդհատ. բոլոր երեք բաժանմունքներին յատկացրած 60 րոպէից *առնազր* 20 րոպէն վատնում է դասարանական անհրաժեշտ կարգապահութեան վրա (չը նախ զրան կարգապահութիւնը ընդհանուր առմամբ լինում է միշտ անբաւարար, անտանելի), իսկ հազիւ 40 րոպէն պարապմունքներին: Այդպիսով օրը 5 ժամ դասարանական պարապմունքներին նւիրող ուսուցիչը

(սովորաբար 5 ժ. նւիրւում են դասերին, 1 ժամ դասամիջոցներին. պարապմունքները տեւում են դպրոցում 8 ժ. մինչև 2-ը, կամ $8\frac{1}{2}$ մինչև $2\frac{1}{2}$, կամ 9-ից մինչև 3-ը) 2 ժամը անօգուտ սպանում է կարգապահութեան վրա ու ամենաշատը 3 ժամ կտրոզանում նւիրել իսկական պարապմունքներին ու այն էլ, ինչպէս պարզ երևում է վերև նկարագրածից, անբաւարար հետևանքներով:

60 րոպէ տեւող դասը անթույլատրելի է տարրական դպրոցում, մանաւանդ նրա ստորին բաժանմունքներում (I-ի, II-դ և III-դ). երկարատև դասերը ռաստիկ ձանձրացնում ու յոգնեցնում են մանկահասակ աշակերտներին, խիստ նկատելի կերպով վատ են ազդում նրանց ֆիզիքական զարգացման վրա, քայքայում են նրանց առողջութիւնը:

Պետական միջնակարգ դպրոցներից շատերում, նրանց բարձր դասարաններում նոյն իսկ, ու տարրական դպրոցների բարձր բաժանմունքներում, սկսած 4-դից, I-ի, II-դ ու III-դ դասերը տեւում են 55-ական րոպէ, իսկ IV-դ ու V-դ դասերը 50-նական. տարրական դպրոցների ստորին բաժանմունքներում աւելի քիչ ժամանակ, այն է՝ 50 րոպէ, 45, 40 (վերջի դասերը, IV-դ, V-դ): Մեր տարրական դպրոցներում պէտքէ վերջ դնել ընդմիշտ դասերի 60 րոպէի հասնող տեւողութեան. բայց դա փոքրագոյն չարիք է համեմատած պա-

րապմունքների այն կարգի (վերև նկարագրած), այն սխառմի հետ, որը շատ ու շատ հազադիւտ բախտաւոր բացառութեամբ գոյութիւն ունի ամենուրեք, մանաւանդ մեր գիւղերում, մեր տարրական միդասեան (երեք բաժանմունքից բաղկացած) դպրոցներում. պէտքէ վերջ դնել այդ չարիքին. նրա վերացումը հնարաւոր կը դարձնի դասերի կրճատումը:

III.

Ինչպէս կարելի է վերջ դնել այդ չարիքին: Կայ երկու միջոց. մէկը նրանցից արմատական է, հիմնովին բարւոքող կրթական դործը տարրական դպրոցում ու հասցնող նրան գերագոյն արդիւնաւետութեան, միւսը կիսամիջոցէ, պաշտօնով է, հիմնովին չը վերացնող չարիքը, բայց հասցնող նրան նւագագոյն չափերի: Առաջի միջոցն այն է, որ միդասեան, երեք բաժանմունքից բաղկացած, տարրական դպրոցն ունենայ երեք ուսուցիչ, երկդասեան, հինգ բաժանմունքից բաղկացած, դպրոցն ունենայ հինգ ուսուցիչ, որպէսզի ամեն մի ուսուցիչ հնարաւորութիւն ունենայ նւիրել իր ժամանակն ու ոյժերը միմիայն մի բաժանմունքի: Այդպիսի պայմաններում միդասեան դպրոցը տարրական ծախս կը պահանջի տոնւազը 2000 րուբլի (հաշւելով մի ուսուցչի քիչ-շատ բաւարար ռոճիկը

500-ից մինչև 600 բուլբի տարեկան, ուսուցիչների ուժերի ներքին աւելացնելով դպրոցի միւս անհրաժեշտ ծախսերը, ինչպէս՝ ծառայի ուժերի, գրագործանի ու գոտարանական ամենաանհրաժեշտ պիտուքների վրա անուղ ծախսը և այլն), երկդասեան դպրոցը կը պահանջի 3500 ռ. առնւազը: Մեր արդի իրականութեան մէջ, մանաւանդ ողբալի գիւղական իրականութեան, այդպիսի բիւջէ, այդքան եկամուտ ունեցող տարրական դպրոցը մի երազ է, որը դեռ տասնեակ տարիներ կը մնայ երազ. միգրասեան դպրոցի համար աննկարագրելի դժւարութիւններով ու խոչնդոտներով հազիւ կարելի է լինում հայթայթել տարեկան 500-600 ռ., հազադիւտ երկդասեանի համար 1000—1200 ռ., ամենաշատը 1500: Այդ ողորմելի բիւջէն է գլխաւոր պատճառը այն դառն իրականութեան, որը գոյութիւն ունի մեր տարրական դպրոցներում, որը նկարագրած է վերեւում. այդ բիւջէի շնորհիւ է դասատուները դառնում ապարդիւն տանջանքների բով՝ թէ ուսուցչի և թէ աշակերտների համար: Այդ իրականութեան դառնութիւնը ինչպէս կարելի է վերացնել կամ մեղմացնել զոնէ այդպիսի անյաղթելի աննպաստ նիւթական պայմանների մէջ: Իսպառ վերացումն անհնարին է, իսկ մեղմացումը հնարաւոր. հնարաւոր է այդ այն պալիատիվ միջոցի գործադրութեամբ, որի մասին ակնարկեց

վերեւում: Այդ միջոցի էութիւնը կայանում է հետեւեալում. առաջի սկսնակ բաժանմունքը բոլորովին ըստանում, առանձնացնում է երկրորդից ու երրորդից. ուսուցիչը նրա հետ պարապում է առանձին դասացուցակով, նոյն ընդհանուր դասարանական սենեակում, բայց ոչ II-դ ու III-դ բաժանմունքների ներկայութեամբ, որոնք բացակայում են դպրոցից I-ի բաժանմունքի դասերի ամբողջ տեղութեան ընթացքում: Սկսնակ բաժանմունքը ունենում է օրեկան 3 դաս, շաբաթական 18, այն է՝ կրօնից 1 դաս, հայոց լեզուից 6, թաւաբանութիւնից 5, իրազննութիւնից 2, վայելչագրութիւնից 2, նկարչութիւնից 1 ու երգեցողութիւնից 1: Դասերից I-ն ու II-դը տեւում են 45 րոպէ իւրաքանչիւրը, III-դը 40 րոպէ. երեքը միասին 130 րոպէ կամ 2 ժամ 10 րոպէ: Օրը լինում է երկու դասամիջոց (I-ի ու II-դ, II-դ ու III-դ դասերի մէջ) իւրաքանչիւրը 10 րոպէ տեղութիւն ունեցող: I-ի բաժանմունքին նւիրում է այդպիսով (դասամիջոցներով հանդերձ) օրեկան ընդամենը 150 րոպէ կամ 2½ ժամ. դասերն սկսւում են ուղիղ ժամը 8-ին առաւօտեան ու վերջանում 10½ ին. դասերը վերջանալուն պէս երեխաները ժողովում են իրենց իրերը ու գնում տուն: I-ի բաժանմունքի պարապմունքները վերջանալուց յետոյ լինում է դասամիջոց, 10 րոպէ տեւող, որի

վերջանալուն պէս, այնէ ուղիղ 10 ժամ 40 րոպէին սկսուում են պարապմունքները II-դ ու III-դ բաժանմունքների հետ,*) որոնք տեղաւորուում են միաժամանակ մի դասարանական սենեակում, բաժանւած երկու խումբ նստարանների վրա: Այդ երկու միատեղ ու միաժամանակ պարապող, բայց իւրաքանչիւրն իր առանձին ձրագիրն ունեցող բաժանմունքները ունենում են օրեկան 4 դաս, շաբաթական 24, այն է՝ կրօնից 2 դաս (I-ը ըստ ժամանակի), հայոց լեզուից 6, ռուսաց լեզուից 5, իրազննութիւնից 2, թւաբանութիւնից 5, վայելչագրութիւնից 2, նկարչութիւնից 1 ու երգեցողութիւնից 1, III-ը ըստ ժամանակի կրօնից 2, հայոց լեզուից 5, ռուսաց լեզուից 5, թւաբանութիւնից 4, պատմութիւնից 2, բնագիտութիւնից 2, վայելչագրութիւնից 1, նկարչութիւնից 1 ու երգեցողութիւնից 1: ^{Դասերից I-ն ու II-ը} ~~Դասերից I-ն ու II-ը~~ տեւում են 45-ական րոպէ (իւրաքանչիւրը), իսկ III-դն ու IV-ը 40-նական րոպէ. չորսը միասին տեւում են 170 րոպէ կամ 2 ժամ 50 րոպէ: Դա-

*) Այդ բաժանմունքների աշակերտները գալիս են մօտաւորապէս 10 ժամից սկսած. սկզբում ուշանողներ կամ աւելի շուտ եկողներ շատ են պատահում, բայց շուտով ընտելանում են նոր կարգին ու բաւականին ճշտապահ են լինում: Ժամանակից շուտ եկողների համար սահմանում է օրապահութիւն հասակաւոր աշակերտներից, որոնք հետեւում են այն բանին, որ շուտ եկողները չը խանգարեն ներսում պարապողներին:

սամիջոցները (թւով 3՝ I-ի ու II-դ դասի մէջ, II-դ ու III-դ, III-դ ու IV-դ) տեւում են 10-նական րոպէ, երեքը միասին հաշուած 30 րոպէ: Դասերն ու դասամիջոցները տեւում են այդպիսով ընդամենը 200 րոպէ կամ 3 ժամ 20 րոպէ. պարապմունքները վերջանում են ուղիղ ժամը 2-ին կէսօրից յետոյ: Այդպիսով I-ի, II-դ ու III-դ բաժանմունքները ունենում են օրեկան 7 դաս, որոնք տեւում են ընդամենը 300 րոպէ կամ 5 ժամ, ու 6 դասամիջոց, որոնք տեւում են 60 րոպէ կամ 1 ժամ. բոլոր դասերն ու դասամիջոցները միասին տեւում են 360 րոպէ կամ 6 ժամ: Եթէ դասերն սկսւում են ուղիղ 8 ժամին առաւօտեան, վերջանում են ուղիղ 2 ժամին կէսօրից յետոյ. եթէ սկսւում են 8¹/₂ ժամին (ձմեռւայ ամիսներում), վերջանում են 2¹/₂-ին: Աւելի ուշ սկսել դասերը, օրինակ ժամի 9-ին, ես անթույլատրելի եմ գտնում, նոյն իսկ ձմեռւայ ամիսներում. տարրական դպրոցի տաները երեկոները կամ գիշերները երկար չեն նստում դասեր սովորելու. այդպիսի կարիք չը կայ ու չը պէտք էլ լինի. անցնւող ուսումնական նիւթը այս կամ այն առարկայից նրանք պէտք է իւրացնեն գլխաւորապէս ուսումնարանում: Տարրական դպրոցի երեխաները սովորաւոր պարկուճ են քնելու 7-ին, 8-ին ամենաուշը 9 ժամին երեկոյեան (գիւղերում աւելի շուտ, մտնաւանդ ձմե-

ուր) ու մինչև առաւօտեան 6-ը բնում են այդպիսով 9-ից մինչև 10-ը, 11 ժամ, որը անապայման բաւական է 8-ից մինչև 15 տարեկան հասակում գտնւող երեխաների համար: Գիւղերում աւելի շուտ են պարկում ու աւելի շուտ արթնանում. յաճախակի դեռ լուսաքայից առաջ մեծերի հետ միասին ոտի վրա են լինում արդէն 7-8 տարեկան երեխաներն անգամ: Ուսուցիչներն այդպիսով հնարաւորութիւն ունեն դասերն սկսել առաւօտեան 8-ին ու վերջացնել 2-ին նոյն իսկ այնպիսի գիւղական գաւրոցներում, որոնք ունեն սաներ, յաճախող դպրոցը 2-3 վերստի վրա գտնւող հարեան գաւրոցագուրկի գիւղից. առաւօտեան ժամի 5-ին արթնացող գիւղացի երեխան հնարաւորութիւն ունի մինչև ժամի 8-ը այդ տարածութիւնը հեշտութեամբ տնցնել: Թոյլատրելի է դասերը առաւօտեան 8¹/₂-ին սկսելը միմիայն ձմեռնամուտի ու ձմեռւայ ամիսներում, այն է՝ նոյեմբերի 15-ից մինչև փետրւարի 15-ը:

Պարապելու նկարագրած կարգով ուսուցիչը նւիրում է գաւրոցին օրեկան 6 ժամ, որոնցից 5-ը սպառւում են դասերի վրա, 1-ը դատամիջոցների, նւիրում է այնքան ժամանակ, ինչքան և այն դէպքում, երբ նա պարապում է *Միաժամանակ* I-ի սկսնակ, II-դ ու III-դ բաժանմունքների հետ միասին, տեղաւորելով նրանց մի դասարանական կամ

երկու կից սենեակներում, ինչպէս այժմս ամենուրեք սովորական է այդ. իրականութեան մէջ ինչպէս են գնում պարապմունքներն այդ կարգով, նկարագրած է վերևում: *Բարեխիղճ ու եռանդուն* ուսուցիչը ձգտելով բաւարար հետեանքների հասնել, այդ կարգով պարապելիս, 6 ժամ չէ միմիայն նւիրում իր սաներին, այլ յաճախակի 7, 8 ժամ նոյն իսկ. բաւարար հետեանքների այդպիսի ուսուցիչն անգամ շատ զժւար է հասնում, սպառելով ահագին եռանդ, մաշելով, քայքայելով իր աւողջութիւնը, նոյնչափ տանջելով և իր մանկահասակ սաներին: Առաջարկւող նոր կարգով դասերը ձգձգելու երբէք կարիք չի լինիլ. սկսնակ բաժանմունքի հետ բոլորովին առանձին պարապելով ու II-դ և III-դի հետ էլ նրանից առանձին, նա հնարաւորութիւն կունենայ իր պարապմունքները տանել միշտ կանոնաւոր, հանգիստ, հանգարտ, պաղարիւն, միանգամայն ազատ ոյս գրութեան առաջի մասում նկարագրած դժոխային քասից, նա անհամեմատ աւելի քիչ ոյժ ու եռանդ կը սպառի իրանից գործի վրա ու համեմատաբար աւելի լաւ հետեանքների կը հասնի. նա շատ քիչ կը տանջւի ու ևս առաւել քիչ կտանջի իր սաներին. հմուտ, փորձած, ՚ի բնէ մանկավարժական ձիրքով, շնորհքով օժտւած ուսուցչի դասատւութեան ժամանակ պարապելու այդ կարգի շնորհով տանջանք անուն

կրող բանը գոյութիւն չէ կարող ունենալ: Թող մեր ուսուցիչներն ու ուսուցչուհիները զուգնթացաբար փորձեն պարապելու սովորական կարգը ու նորը, այս գրութեամբ առաջարկւողը. երկար փորձերի կարիք չեն զգալ համոզւելու համար, որ զանազանութիւնը նրանց մէջ շատ մեծ է, ու նոր կարգը, համեմատած առաջինի հետ, աւելի նպատակաշարմար է կրթական գործին մեր տարրական միջաւան, երեք բաժանմունքից բաղկացած, դպրոցում նրա գոյութեան արդի նիւթական աննախանձելի, խղճուկ պայմանների մէջ ցանկալի կանոնաւորութիւն տալու նրան աւելի արդիւնաւետ դարձնելու համար: Այդպիսի փորձեր արեւելեն. հետեւեալքը եղել է նպաստաւոր առաջարկւող նոր կարգի համար. վերջինս երկու ուսումնական տարի շարունակ գործադրւել է մի քանի ծխական տարրական դպրոցներում (Պանձակի գաւառում, 1906-1907, 1907-1908 ուսումնական տարիների ընթացքում, տողերիս գրողի խորհրդով, ցուցմունքներով ու մասամբ ղեկավարութեամբ) ու տւելէ շատ միտքարական հետեւեալքներ:

IV.

Առաջարկւող նոր կարգը, համեմատած հնի հետ, ումի մի ուրիշ աչքի ընկնող խոշոր առաւելութիւն ևս. միաժամանակ երեք բաժանմունքը մի

դասարանական կամ երկու կից սենեակում տեղաւորող ու նրանց հետ միաժամանակ պարապող ուսուցիչը մեծ դժւարութիւններով հաղիւ կարողանում է պարապել 50-60 հոգու հետ. բոլոր երեք բաժանմունքների աշակերտ-աշակերտուհիների ընդհանուր թիւը սովորաբար 50-60-ից հաղիւ է անցնում այդպիսով. պատահում են ուսուցիչներ, որոնք զիջում են ծնողների թախանձագին խնդիրներին ու երեսանների աւելի մեծ թիւ ընդունում, հասցնելով աշակերտ-աշակերտուհիների ընդհանուր քանակը բոլոր երեք բաժանմունքներում 70-75, 80-85 հոգու նոյն իսկ: Պէտք է երեւակայել այն դասարանի ողբալի իրականութիւնը, որն իր երեք բաժանմունքով միաժամանակ տեղաւորում է իր մէջ այդքան հոգու. . . Առաջարկւող նոր կարգով եթէ ընթանան դասարանական պարապմունքները, այն ժամանակ I-ի սկսնակ առանձին պարապմունքներ ունեցող բաժանմունքում կարող են աջողութեամբ սովորել 50-ից մինչև 60³ հոգի, II-դ ու III-դ միաժամանակ պարապող ու մի դասարանական սենեակում տեղաւորող բաժանմունքներում նոյնպէս 50-ից մինչև 60³ հոգի (հաշւելով այդչափ ոչ թէ ամեն մի⁴ բաժանմունքում, այլ երկուսում միասին): Այդպիսով մի ձեռնհաս ուսուցիչ ունեցող միջաւան երեք բաժանմունքից բաղկացած տարրական դպրոցում սովորել կարող են 100-ից

մինչև 120 հոգի ու այն էլ աւելի աջող, նոյն իսկ անհամեմատ աւելի աջող, քան այն դէպքում, երբ ուսուցիչը երեք բաժանմունքի հետ պարապում է միաժամանակ, տեղաւորելով նրանցում 50-ից մինչև 80-85 հոգու։ Այդ կարգով երկու ձեռնհաս ուսուցիչը կարող են պարապել 200-ից մինչև 240 հոգու հետ։ Այդ հնարաւոր է միգասեան դպրոցի այսպիսի կազմակերպմամբ. դպրոցը մնում է մի-դասեան, բայց երկու դասատուն ունեցող, իւրաքանչիւրը բաղկացած նոյն երեք բաժանմունքից, I-ի, II-դ և III-դ. դասատուներից մէկը կոչուում է՝ միգասեան դպրոցի հիմնական դասատուն, միւսը՝ նոյն միգասեան դպրոցի զուգնթաց դասատուն. երկուսումնէլ ծրագիրը նոյնն է, իսկ երկուսի բաժանմունքների ընդհանուր թիւը վեց։ Մի ուսուցիչ վերև նկարագրած կարգով կարող է տանել ամբողջ գործը հիմնական դասատան բոլոր երեք բաժանմունքներում ու պարապել 100-ից մինչև 120 հոգու հետ, միւսը նոյնը կարող է անել զուգնթաց դասատան բաժանմունքներում ու պարապել նոյնպէս 100-ից մինչև 120 հոգու հետ։ Այդպիսի կազմ միգասեան դպրոցին կարելի է տալ այնպիսի համայնքում, որը բաւականանում է միգասեան դպրոցով ու ունի վերջինումս սովորող ցանկացողների մեծ թիւ, որոնց նա, դպրոց պահող համայնքը, ձգտում է բաւարարութիւն տալ

ամենահամեստ, ամենաչափաւոր կրթութեամբ, միգասեան դպրոցի ծրագրով սահմանափակող։ Եթէ դպրոց պահող համայնքը ցանկանում է համեմատաբար լայն կրթութիւն տալ իր զաւակներին, նա այն ժամանակ երկու ձեռնհաս ուսուցչով կարող է իր ծխական դպրոցը միգասեանից դարձնել երկգասեան, որի առաջին դասատուներ բաղկացած կը լինի երեք բաժանմունքից, իսկ երկրորդը երկու. դպրոցն այդպիսով կունենայ հինգ բաժանմունք (I-ի դասատուներ I-ի, II-դ ու III-դ բաժանմունքներից բաղկացած, II-դ դասատուներ IV-դ ու V-դ բաժանմունքներից բաղկացած). առաջի դասատան բոլոր երեք բաժանմունքում վերև նկարագրած կարգով ամբողջ գործը կարող է տանել մի ուսուցիչ, երկրորդ դասատու երկու բաժանմունքում միւսը։ Առաջի դասատանը պարապել կարելի է 100-ից մինչև 120 հոգու հետ, իսկ երկրորդում 40-ից մենչև 50 (երկու բաժանմունքում միասին)։ Երկրորդ դասատան բացման առաջի տարում նա կունենայ միմիայն մի բաժանմունք (IV-դ, հաշւելով առաջի դասատան երեք բաժանմունքի կարգում, յաջորդաբար նրանց), որտեղ պարապել կարելի է նոյն 40—50 հոգու հետ աւելի աջող, քանի որ ուսուցիչը դասարանական ամբողջ ժամանակը հնարաւորութիւն կունենայ նւիրել մի բաժանմունքի միայն։ Նոյն դասատան զուգնթեան

երկրորդ տարուց գոյութիւն կը ստանալ նա II-դ բաժանմունքը կամ ամբողջ դպրոցի V-դը, որը I-ի բաժանմունքի կամ ամբողջ դպրոցի IV-դի հետ կը տեղաւորուի մի գասարանական սենեակում միաժամանակ պարապմունքներով, դասին յատկացրած ժամանակի կէսի նւիրմամբ մի բաժանմունքին, մնացած կէսիմիւս:

V.

Երկգասեան տարրական դպրոցի երկրորդ գաստանը օրը լինում է 5 դաս, շաբաթական 30, այն է՝ կրօնից 2 դաս, հայոց լեզուից 6, ռուսաց լեզուից 5, թւարանութիւնից 3, պատմութիւնից 3, աշխարհագրութիւնից 2, բնագիտութիւնից 3, երկրաչափական ձևագիտութիւնից 1, նկարչութիւնից 2, վայելչագրութիւնից 1 ու երգեցողութիւնից 2: I-ի, II-դ ու III-դ դասերը տեւում են 55-ական րօպէ (իւրաքանչիւրը), իսկ IV-դ ու V-դ դասերը 50-նական. օրը լինում է չորս գասամիջոց, որոնցից I-ը (I-ի ու II-դ դասերի մէջ) տեւում է 15 րօպէ, II-դը (II-դ ու III-դ դասերի մէջ) նոյնպէս 15 րօպէ, III-դը, մեծ գասամիջոցը, (III-դ ու IV-դ դասերի մէջ) տեւում է 50 րօպէ, իսկ IV-դը (IV-դ ու V-դ դասերի մէջ) դարձեալ 15 րօպէ: Բոլոր դասերը միասին տեւում են 265 րօպէ կամ 4 ժամ 25 րօպէ, բոլոր գասամիջոցները միասին տեւում են 95 րօպէ կամ 1 ժամ 35 րօպէ. դասերն ու գասա-

միջոցները միասին տեւում են 360 րօպէ կամ 6 ժամ: Պարապմունքներն սկսում են ու վերջանում միաժամանակ I-ի գաստան պարապմունքների հետ: Քանի որ դասերի ու գասամիջոցների տեւողութիւնը I-ի ու II-դ գասարաններում առաջարկուող կարգով միատեսակ չէ, բնականաբար միաժամանակ զանգահարութիւն կարող են ունենալ նրանք բոլոր պարապմունքների սկզբում ու վերջում: Այդ երկու զանգահարութիւնների մէջ ընդհանուր զանգահարութիւն չէ հարկաւոր ոչ մի դասի վերջում (բացի ամենավերջին դասի). դասը վերջանալուն պէս, առանց զանգահարութեան, ուսուցիչը յայտարարում է աշակերտ-աշակերտուհիներին՝ «դասը վերջացաւ դուրս գնացէք» երեխաները դուրս են գալիս գասատնից, զբօսնում թարմ օդում, վազվզում, խաղում, նախաճաշում (նրանք, որոնք իրենց հետ ուտելու բան ունեն բերած). երբ գասամիջոցը վերջանում է, ուսուցիչն ինքը կամ նրա առաջարկութեամբ օրապահ աշակերտը զանգահարում է ու այդպիսով հրաւիրում երեխանց գասատուն: Այդ կարգին է հետեւում թէ առաջի և թէ երկրորդ գասատան ուսուցիչը: Կարող է հարց ծագել՝ միթէ գասամիջոցի ժամանակ զբոսում գտնուող աշակերտները չեն խանգարիլ այն աշակերտներին, որոնք նոյն ժամանակ նստած են գասատանը ու պարապում են. ոչ, խանգարել չեն կարող, եթէ

ուսուցիչները խեղացի կարգապահութեան (գիւ-
ցիպլինի) ընտելացնեն երեխաներին: Կոստամիրջո-
յների ժամանակ ուսուցիչներն էլ պէտքէ գտնեն
գրքում այն նպատակով, ինչ նպատակով գտնու-
են երեխաները, այն է թարմանալու, թարմ օգ-
շնչելու համար. գտնելով գրքում, նրանք զբոս-
նում են երեխաների մէջ ու իրենց ներկայութե-
ամբ չափաւորում նրանց աղմուկը, արգելելով
անկարգութիւնները, բայց բնաւ չարգելելով խա-
ղերը: Այգպլիսի պայմաններում, ուսուցչի հսկողու-
թեան տակ գտնուող գրքի երեխաները, դասամի-
ջոցների ժամանակ, երբէք չեն խանգարիլ նրանց,
որոնք ներսում պարապում են. բացի ուսուցչի
անմիջական հսկողութիւնից բաւականէ երեխանե-
րի ուշադրութիւնը երբեմնակի հրաւիրել այն բա-
նի վրա, որ նրանք իրենց չափազանց աղմուկով
խանգարում են ներսում գտնուող իրենց ընկերնե-
րին պարապել, որպէսզի ցանկալի կարգապահու-
թիւնը սովորական հաստատուն երևոյթ դառնայ
դպրոցում: Կարող է ծագել և այսպիսի հարց՝ դա-
սամիջոցի վերջում գրքում գտնուողներին ներս
հրաւիրելու համար զանգահարելիս չէ որ ներսում
այդ ժամանակ գտնուող ու պարապող միւս դասա-
րանի աշակերտները կարող են չուզել, շարժել,
վեր կենալ տեղներից, կարծելով, թէ իրենց դասը
վերջացել է. այգպլիսի բան չէ կարող լինել, քանի

որ երեխաներին ուսումնական տարւայ հենց սկզ-
բի մի քանի օրում հեշտութեամբ կարելի է ընտե-
լացնել սահմանաժամ կարգին, այն է՝ որ դասը վեր-
ջացած է համարում այն ժամանակ միայն, երբ
ուսուցիչը բարձրաձայն յայտարարում է՝ « դասը
վերջացաւ, դուրս գնացէ՛ք ». իսկ զանգահարու-
թիւնը գոյութիւն ունի միմիայն դրսից դասա-
տուն մտնելու համար, դասամիջոցի վերջանալուն
պէս:

Եթէ երկդասեան դպրոցի երկրորդ դասատունը
ունի մի բաժանմունք միայն (IV-դ, միւսների
շարքում) կամ ունի երկուսը (IV-դ ու V-դ),
որոնց դպրոցի նիւթական միջոցները հնարաւորու-
թիւն են տալիս բաժանել իրարից ու տեղաւորել
առանձին-առանձին դասարանական սենեակներում
իւրաքանչիւրին տալով առանձին ուսուցիչ,
այդ պայմանների մէջ էլ դասերի դասամիջոցների
թիւն ու տեղութիւնը չեն փոխում, մնում
են դարձեալ վերև մատնանշած չափերի սահ-
մաններում:

VI.

Եթէ դպրոց պահող համայնքը ցանկութիւն ու-
նի իր զաւակներին լրիւ տարրական կրթութիւն
տալ, այն ժամանակ նա կարող է իր դպրոցը երեք
ձեռնհաս ուսուցչով երկդասեանից դարձնել երեք-
դասեան. երրորդ դասատունը բաղկացած է լինում

միայն մի բաժանմունքից, որը դպրոցի բոլոր բաժանմունքների կարգում, յաջորդաբար հաշվելով, կույնում է ՎՊ-դ բաժանմունք: Երեք ուսուցիչներից մինը տանում է ամբողջ գործը I-ի դասարանում, երկրորդը II-դ դասարանում, երրորդը III-դում կամ, այլ կերպ ասած, ՎՊ-դ բաժանմունքում: Եթե ուսուցիչներից որ և է մինը այնպիսի բազմակողմանի պատրաստականութիւն չունի, որ կարողանայ իրեն յանձնած դասարանում բոլոր առարկաների դասատուութիւնը միատեսակ աջողութեամբ տանել (օրինակ, պետական դպրոցում է ստացել իր կրթութիւնը ու այդ պատճառով թոյլ է հայտ լեզուից, որը բնականաբար աջող տանել չի կարող), այն ժամանակ կարելի է թոյլատրել առարկաների բաժանումը II-դ ու III-դ դասարանի ուսուցիչների մէջ: I-ի դասատան մէջ չը պէտք է երբէք առարկաների բաժանում մտցնել^{*}). այդ դասատան համար միշտ պէտք է ընտրել այնպիսի ուսուցիչ, որն ընդունակ լինի միատեսակ աջողութեամբ տանել բոլոր առարկաների դասատուութիւնը:

Երրորդ դասարանում կամ ՎՊ-դ բաժանմունքում օրեկան լինում է 5 դաս, շաբաթական 30, այն է կրօնից 2 դաս, հայոց լեզուից 5, ռուսաց լեզուից

*) Դասատուութեան դասարանական ու առարկայական կողմի կամ սիստեմի մասին մանրամասը մի ուրիշ անգամ:

5, պատմութիւնից 4, աշխարհագրութիւնից 2, բնագիտութիւնից 2, մարդակազմութիւնից ու առողջապահութիւնից 2, թւաբանութիւնից 3, երկրաչափական ձևագիտութիւնից 1, քաղաքացիական ուսմունքից 1. նկարչութիւնից 1, վաշելագրութիւնից 1 ու երգեցողութիւնից 1: Դասերից I-ինը, II-դը ու III-դը տեւում են (իւրաքանչիւրը) 55-ական րօպէ, իսկ ՎՊ-դն ու Վ-դը 50-ական. I-ի դասամիջոցը տեւում է 15 րօպէ, II-դը նոյնպէս 15 ր., III-դը 50 ր., իսկ IV-դ 15 ր. գարձեալ. դասերն ու դասամիջոցները միասին տեւում են 360 րօպէ կամ 6 ժամ, որոնցից 4 ժամ 25 ր. սպառւում են դասերի վրա, իսկ 1 ժամ 35 րօպէն դասամիջոցների: II-դ ու III-դ դասարաններում դասերն ու դասամիջոցներն այդպիսով միաչափ տեւողութիւն ունեն, միաժամանակ սկսւում են, միաժամանակ վերջանում:

50 րօպէ տեւող մեծ դասամիջոցը (III-դը) նպատակադարձար է շահագործել այսպէս՝ կազմակերպել մանկական խաղեր, զբաղեցնել երեխաներին մարմնամարզութեամբ, շաբաթական զոնէ չորս անգամ, իւրաքանչիւր անգամ յատկացնելով նրան 30 րօպէ, իսկ մնացած 20 րօպէն թողնելով երեխաների ազատ սրամազրութեան տակ: Ձեռագործով (աշակերտութիւններին), իսկ ձեռարւեստով (աշակերտներին), որտեղ հնարաւորութիւն

ու ցանկութիւն կայ այդ պարապմունքը կազմակերպել, կարելի է զբաղեցնել դարձեալ մեծ դասամիջոցներին, շաբաթական յատկացնելով այդպիսի պարապմունքներին չորս դաս, իւրաքանչիւրը 30 րոպէի տևողութեամբ: Այդ դեպքում մարմնամարզութեամբ կարող են պարապել միմիայն երկու անգամ շաբաթական: Ի-ի դաստանն աշակերտուհիներին ձեռագործով կարելի է զբաղեցնել ճաշից յետոյ, շաբաթական երկու անգամ, ժամի 3¹/₂-ից մինչև 4¹/₂-ը կամ 4-ից մինչև 5-ը: Աւելորդ է մանրամասնորէն կանգ առնել այն բանի վրա, որ ձեռագործի համար հարկաւոր է մասնագէտ ուսուցչուհի, իսկ ձեռարւեստի (ручной трудъ) մասնագէտ ուսուցիչ: Եթէ դպրոցի միջոցները թոյլ չեն տալիս այդպիսի մասնագէտներ ունենալ, այնտեղ այդ պարապմունքները գոյութիւն ունենալ, ի հարկ է, չեն կարող: Քանի որ ձեռագործը անհրաժեշտ է աշակերտուհիների համար, ցանկալի է այդ պատճառով, որ 2—3 հոգուց բաղկացած ուսուցչական խմբի անդամներից մինը լինի այնպիսի ուսուցչուհի, որը ձեռնհաս լինի պարապելու ծրագրի մէջ մտնող բոլոր աւարկաներով, ձեռագործով նույնպէս:

VII.

Երեք բաժանմունքից բաղկացած միդասեան տարրական դպրոցը պէտք է ունենայ (եթէ մի

ուսուցչի վրա է ծանրանում ամբողջ զործը) մի դասարանական սենեակ՝ ընդարձակ, լուսաշատ, օդառատ, չոր ու տաք (ձմեռը). նա պէտք է ունենայ փայտե յատակ, 30 հատ երկտեղանի կամ 20 հատ երեք տեղանի աշակերտական նստարաններ (գերադասելի են երկտեղանիները), մի զբոսախոտակ, մի ուսուցչական սեղան ու երեք հատ աթոռ (մէկը ուսուցչի համար, երկուսը ուցելուների) ու մի փոքրիկ պահարան աշակերտական տետրակների ու ուսուցչի մշտական տրամադրութեան տակ գտնուող անհրաժեշտ դասարանական պիտույքների համար: Եթէ դպրոցը երկդասեան է, պէտք է ունենայ երկրորդ այդպիսի սենեակ նույն անհրաժեշտ կահաւորութեամբ, երկրորդ դասատան կամ VI-դ ու V-դ բաժանմունքների համար. եթէ երեք դասեան է, պէտք է ունենայ երրորդ այդպիսի սենեակ, նույնպէս լաւ կահաւորած, երրորդ դասատան կամ VI-դ բաժանմունքի համար: Այդ սենեակի համար աշակերտական նստարաններ հարկաւոր են 25 հատ միմիայն երկտեղանի քանի որ III-դ դասարանում կամ V-դ բաժանմունքում աշակերտ-աշակերտուհիների թիւը չը պէտք 50 աւել լինի:

Ինչքան էլ սուղ, համեստ լինեն դպրոցի նիւթական միջոցները, պէտք է նրա դասարանների ու բաժանմունքների թւի համեմատ աճին, տա-

րէցտարի հարստանան նրա զրազարանն ու դասարանական պիտոյքների ժողովածուն. առանց զրազարանի, որում պէտքէ լինեն զրքեր՝ թէ աշակերտների և թէ ուսուցիչների ընթերցանութեան համար, ու մանաւանդ առանց դասարանական անհրաժեշտ պիտոյքների կրթական գործը դպրոցում լիակատար բաւարարութեամբ չէ կարող ընթանալ:

Եթէ դպրոցը բացի հիմնական դասարաններից ունի և զուգնթացներ կամ վերջիններս բանալու կարիք ու ցանկութիւն կալ, պէտք է ամեն մի զուգուցնթացի համար անհրաժեշտ կահաւորութեամբ առանձին դասարանական սենեակ ունենայ:

VIII.

Տարրական դպրոցում պարապելու վերև նկարագրած կարգը, նկարագրած իր բոլոր մանրամասնութիւններով, առաջարկուում է գործադրել այնպիսի դպրոցներում, որոնց գոյութիւնը պահպանուում է շատ համեստ նիւթական միջոցներով, այն էլ գանձուղ, ճարւող, հալթալթուող աննկարագրելի, լաճախ անյաղթելի դժարութիւններով, ինչպէս մատնանշւած է այդ նաև վերևում: Մեր կրթական գործով զրազուողներից ու հետաքրքրւողներից ոչ ոքի անյայտ չէ այն, որ մեր տարրական դպրոցների ստւարագոյն մեծամասնու-

թիւնը, մանաւանդ զիւղական դպրոցների մեծամասնութիւնը, գտնուում է նիւթական ողբալի դրութեան մէջ. գուրկ է մշտական աղբիւրներից ու կախւած աւելի պատահականներից: Ահա այդ ստւարագոյն մեծամասնութեան համար է առաջարկուում պարապելու վերև նկարագրած կարգը. այդ ստւարագոյն մեծամասնութիւնը պէտք է կազմակերպւի վերև նկարագրած ձևով, որպէսզի գոյութիւն ունեցող համեստ նիւթական միջոցներով կարելի լինի հնարաւորութեան չափ հասնել քիչ-շատ աչքի ընկնող նպատակների: Եթէ դպրոց պահող որ և է համայնքի միջոցները ներում են տարէցտարի անընդհատ մեծացնել իր ուսուցչական խումբը ու հասցնել վերջիններիս անգամների թիւը առնւազը *վեցի* (լիակատար կազմ, վեցգետեան կամ վեց իրարից ջոկ, իւրաքանչիւրն առանձին դասարանական սենեակում պարապող բաժանմունք ունեցող տարրական դպրոցի համար), նա չը պէտք է մի րօպէ անգամ կանգ առնի դրա առաջ. եթէ այդպիսի համայնքը կամ նրա դպրոցի մասին հոգացող նրա լիագոր մարմինը, հոգաբարձութիւնը, պարապելու իմ ցոյց տւած կարգը իր մաթին փաթաթան կը շինի, լաւագոյնը կը համարի այդ ու չի ձգտիլ իսկական լաւագոյնին, երբ այդ լաւագոյնն իրականացնելը նրա միջոցները թոյլ են տալիս, դրանով ուղղակի յանցանք կը լինի գործած: Տարրական կրթութեան պահանջ-

ներին լիակատար բաւարարութիւն տուող տարրական դպրոցը պէտք է լինի վեցդասեան, որն ի նկատի ունի մեզանում իրականացնել (այդ իրականացումը կախած է նիւթական միջոցներից) մեր ծխական տարրական դպրոցների կանոնադրութեան ու ծրագրի «նախագիծը» (1905-1906 թ. կազմած):

Նա բաղկացած պէտք է լինի վեց դասարանից կամ վեց իրարից ջոկ պարապող, իւրաքանչիւրն առանձին դասարանական սենեակում տեղաւորուող, բաժանմունքներից, որոնք շնորհիւ այդ նպատակով պայմանի աւելի արդիւնատէտ են լինում, քան այն դէպքում երբ երկուսով կամ երեքով (ինչպէս այժմեան միդասեաններում է) տեղաւորում են մի դասարանական սենեակում մի ուսուցչով: Այդպիսի լիակատար կազմ ունեցող տարրական դպրոցը պէտք ունենայ առնադր վեց ուսուցիչ, հաշւելով իւրաքանչիւր դասարանի համար մի ուսուցիչ: Եթէ դպրոցի միջոցները ներում են, պէտք է վեց դասարանի համար ունենալ ութ ուսուցիչ, քանի որ վեց հոգին նոյն իսկ, չափից դուրս ծանրաբեռնւած լինելով դասերով չեն կարող տանել գործը լիակատար աջողութեամբ. ութ հոգուց բաղկացած խումբը աւելի քիչ կը լինի ծանրաբեռնւած դասերով ու աշակերտական տետրակներով (աշակերտների գրու-

թիւները միշտ ուղղել հարկաւոր է), հետեւաբար աւելի լաւ կը տանի գործը: Զուգնթաց դասարանների բացման դէպքում պէտք է մեծացնել ուսուցիչների թիւը, ամեն մի զուգնթացի համար նոր ուսուցիչ հրաւիրելով:

Այդպիսի դպրոցը պէտք է ունենայ նաեւ, դասատուների վերեւ մատնացոյց արած թւից աւել, մի, երկու մասնագէտ դասատու՝ ձեռագործի, ձեռարւեստի, երգեցողութեան, նկարչութեան ու մարմնամարզութեան համար:

Դպրոց պահող համայնքները պէտք է ամեն կերպ աշխատեն բարելաւել, բարւոքել ուսուցիչների նիւթական գրութիւնը: Անբաւարար վարձատրուող ուսուցիչը, ստիպւած լինելով միշտ կուէլ նիւթական զրկանքների ու ձախորդութիւնների դէմ ցանկալի սիրով ու եռանդով չէ կարողանում նւիրել գործին. նա իր աշխատանքը կատարում է կիսատ-պռատ, անիծելով իր գրութիւնն ու իր պաշտօնը, որից նա աշխատում է ազատւել առաջի յարմար բոլէին, հէնց որ մի ուրիշ ձեռնտու գործ է գտնում:

Մեր տարրական դպրոցներում (թէ քաղաքներում և թէ գիւղերում) ուսուցչի նաազազոյն ուղիկը պէտքէ լինի 500-ից մինչև 600 բուրլի. մեծ քաղաքներում դեռ աւելի դրանից, քանի որ կեանքն այնտեղ աւելի թանկ է: Եթէ մի ուսու-

ցիւ տարիներ շարունակ պաշտօնավարում է մի դպրոցում ու տարեցտարի իր բարեխիղճ վերաբերմամբ գործին աւելի ու աւելի արդիւնաւէտ դարձնում իր աշխատանքը, պէտք է նրա ուղիկը իւրաքանչիւր մի 2-3 տարին մի անգամ մի որոշ գումարով աւելացնէ: Լաւ վարձատրւող աշխատաւորն է միայն լաւ կատարում իրեն յանձնած աշխատանքը. թէեւ լինում են բացառութիւններ, բայց ես ի նկատի ունեմ ընդհանուր երեւոյթը, այլ ոչ բացառութիւնը: Լաւ վարձատրւող ուսուցիչը սովորաբար բարեխղճութեամբ ու եռանդով է տանում իր ստանձնած գործը:

IX.

Հարկաւոր եմ համարում մատնացոյց անել միգասեան երեք բաժանմունքից բաղկացած տարրական դպրոցում պարապելու իմ առաջարկած կարգին վերաբերող մի քանի մանրամասնութիւններ: Երբ այդ կարգը մտցնելի դպրոցում, այն է՝ I-ի բաժանմունքը ժողովւելի ժամը 8-ին ու ցրելի 11¹/₂-ին, իսկ II-դն ու III-դ պարապել սկսին նրանից յետոյ ու ցրւեն 2-ին, ծնողներից (գիւղերում մանաւանդ) ուսուցիչը բողոքներ, տրտունջներ կը լսեն. նրանք կը զանգատւեն, որ վարժապետը քիչ է պահում երեխաներին ուսումնարանում, հետեաբար քիչ բան է սովորեցնում նրանց. կրթական գործի հետ անծանօթ ծնողները միամտաբար կարծում են, թէ երեխան քանի

շատ մնայ ուսումնարանում, քանի երկար նստի դասատան մէջ, այնքան շատ բան կը սովորի: Ծնողների ու առհասարակ դպրոցով հետաքրքրւող մարդկանց, դպրոց պահող համայնքի անդամների, բողոքներին վերջ տալու համար բաւական է գումարել մի ժողով ու բացատրել, թէ ինչու համար են երեխաները երկու առանձին խմբի բաժանւում, իրարից ջոկ պարապում ու համեմատաբար (նախկին կարգի հետ) քիչ մնում դպրոցում, թէ այդ կարգով ուսուցիչը, աւելի քիչ տանջելով երեխաներին ու իրան, հնարաւորութիւն ունի դպրոցին նւիրւող որոշ ժամանակամիջոցի տեղում թեան ընթացքում աշակերտ-աշակերտահիւնների աւելի մեծ թւի հետ պարապել ու այն էլ աւելի լաւ հետեւանքներով, քան այն զէպքում, երբ երեք բաժանմունքի հետ պարապում է միաժամանակ, մի դասարանական կամ երկու կից սենեակներում տեղաւորելով նրանց: Թողովականներից ուսուցիչը շնորհակալութիւն կը լսի միայն ու դրանով կը վերջանան մինչ այդ լսող բողոքները:

Առաջարկւող կարգով պարապմունքերը առաջ տեղի են ունենում I-ի բաժանմունքի հետ, յետոյ II-դ ու III-դ: Այդպէս պէտք է տանել պարապմունքները աշնան ու ձմեռւայ ամիսներում, իսկ գարնանը, մարտի 1-ից սկսած, համայնքի համար աւելի նպատակայարմար է (այս խորհուրդը տր-

ւում է բացառապէս գիւղական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիներին) այդ կարգը փոխել ու պարապել առաջ II-դ ու III-դ բաժանմունքի երեխաների հետ, յետոյ I-ի: II-դ ու III-դ բաժանմունքների երեխաները աւելի հասակաւոր են, հետեւաբար նրանք աւելի են պէտք թէ տնային և թէ դրսի (դաշտային) աշխատանքի համար, քան առաջիններիք. աշնանը ու ձմեռը մանաւանդ նրանք հարկաւոր են տանը առաւօտեան ժամերին (պէտք է տան անասուններին քշել տանել գետը, առուն կամ աղբիւրը ու ջուր տալ, պէտք է մաքրել գոմը, դուրս կրել աղբը, մարագից լարդ հանել, դէզից խոտ վերցնել ու տանել գոմը անասուններին կերակրելու համար. գրանով զբաղւում են տան ոչ միայն հասակաւոր անդամները. փոքրերն էլ շատ պէտք են գալիս), իսկ գարնանը հարկաւոր են դաշտում, այգում, պարտէզում ամբողջ օրը: Այդ պատճառով շատ ծնողներ գարնանը, մանաւանդ ապրիլին ու մայիսին, հնարաւորութիւն չեն ունենում երեխաներին դպրոց ուղարկել: Վերջի երկու բաժանմունքների աշակերտների թիւը խիստ զգալի չափով նւազում է, ուսուցիչը հնարաւորութիւն չունենում նոր բան անցնել: Եթէ ուսուցիչը II-դ ու III-դ բաժանմունքների հետ պարապի գարնան ամիսներում առաւօտեան ժամի 8-ից, կը վերջացնի նրանց հետ պարապմունքները 11

ժամ 20 րոպէին, որից յետոյ երեխաները կարող են գնալ դրսի աշխատանքների. դժւար չէ ապրիլի 1-ից սկսել պարապմունքները առաւօտեան ժամը 7-ից (գիւղացի երեխաները, ինչպէս ասացինք, շատ շուտ են արթնանում. ուսուցիչը, ուսուցչուհին այդ սովորութիւնից եթէ զուրկ են, պէտք է աշխատեն իւրացնել նրան). այն ժամանակ պարապմունքները II-դում ու III-դում կը վերջանան 10 ժամ 20 րոպէին, ու երեխաները աւելի շուտ կը հասնեն օգնութեան դրսում աշխատող իրենց ծնողներին: Եթէ դպրոցում այդպիսի կարգ հաստատուի, շատ հազաւգիւտ կը գառնան գարնան ամիսներում երեխաներին դպրոցից զրկելու գէպերը. ինչքան էլ փոքրերի օգնութեան կարօտ լինեն մեծերը, էլի մինչև ժամի 10 — 11-ը մի կերպ եօլա կը գնան առանց նրանց. շնորհիւ այդ կարգի այդպիսի եօլա գնացողների թիւը կը մեծանայ, ու երեխաների ստւար մեծամասնութիւնը հնարաւորութիւն կունենայ այդպիսով մինչև ուսումնական տարւայ վերջը, մայիսի 31-ը, յաճախել դպրոցը: Եթէ որ և գիւղում աշնանն էլ գոյութիւն ունեն դրսի բազմապիսի աշխատանքներ (աշնանային վար ու ցանքս, ուշացած կալ կախումն, այգիների, պարտէզների ու բանջարանոցների բերքի ժողովումն), պէտք է այնտեղ էլ աշնան երկու ամիսների ընթացքում, սեպտեմբերի ու հոկտեմբերի, առաջ

պարապել II-դ ու III-դ բաժանմունքների հետ, յետոյ սկսնակ I-ի: Եթէ տարրակոն միգասեան դպրոցը բաղկացած է միմիայն երկու բաժանմունքից, I-ի սկսնակից ու II-դից, III-դը դեռ չը կայ, դեռ գոյութիւն չէ ստացել շնորհիւ դպրոցի նոր բացման, այդ դէպքում էլ պէտք է սկսնակ բաժանմունքի հետ պարապել առանձին, II-դի հետ էլ իր հերթին առանձին, պարապել վերև նկարագրած կարգով ու ստորև ցոյց տւած դասացուցակով: Եթէ միմիայն II-դի հետ պարապելիս ուսուցիչը դասատանը ներկայ ունենայ նաև սկսնակ բաժանմունքը, որին պէտք է նւիրի իւրաքանչիւր դասի կէսը, համարեա նոյն դժւարութիւնների մէջ կրնկնի, ինչպիսի դժւարութիւնների մէջ խարխափում է, երբ սկսնակին միաժամանակ է զբաղեցնում II-դ ու III-դ բաժանմունքների հետ:

Մի ըստ երևոյթին փոքր, բայց իսկապէս խոշոր յարմարութեան անհրաժեշտութեան վրա էլ հարկաւոր եմ համարում դարձնել գիւղական ուսուցիչների ուշադրութիւնը: Գիւղական դպրոցը սովորաբար զուրկ է լինում պատի ժամացոյցից, հազւագիտ պատահածն էլ երկար կանգնելուց ժանգոտած է լինում կամ բանում է անկանոն: Ուսուցիչը պէտք է լաւ ժամացոյց ունենայ ու պահի նրան շատ սարքին, ժամանակին լարելով: Առանց կանոնաւոր բանող ժամացոյցի անհնարին

են կանոնաւոր պարապմունքները, ուսուցիչը պարապելիս, պէտք է ժամացոյցը միշտ աչքի առաջին ունենայ, լինի վերին աստիճանի ճշտապահ, ակկուրատ, դասամիջոցից ժամանակ չը խլի ու դնի դասի վրա ու դասից դասամիջոցի: Ճիշտ նշանակւած րօպէին պէտք է սկսի դասը ու նշանակուած րօպէին վերջացնի: Փչացած, օրերով կանգ առնող ժամացոյցով չի կարելի պարապմունքները կանոնաւոր տանել. քաօսային գրութեան մէջ կրնկնին նրանք: Եթէ ուսուցչի ժամացոյցը փշանում է, պէտք է շտապի շուտով զրկել նրան մօտակայ ժամագործ ունեցող վայրը ուղղելու համար, իսկ մինչ նրա ետ ստանալը գիւղի ժամացոյցատէրերից ժամանակով մինը խնդրել օգտւելու. ինչքան էլ փոքր լինի գիւղը, էլի մի քանի ժամացոյցատէրեր կը գտնւին այնտեղ: Եթէ դպրոցում կան մի քանի դասատուներ, իւրաքանչիւրը պէտք է ունենայ իր առանձին ժամացոյցը: Պատահում են անփութ ուսուցիչներ, որոնք երբեմնակի շաբաթներով համարեա եօլա են գնում առանց ժամացոյցի. իրենցը փշանում է. ուղարկում են ուղղելու. երբեմն չեն էլ ուղարկում, սպասում են իրենց քաղաք գնալուն. նեղութիւն չեն կրում որ և է ժամացոյցատէրից ժամանակաւորապէս ժամացոյց խնդրել: Նրանք իրենց դասերին ու դասամիջոցներին յատկացրած ժամանակը որոշում են, այսպէս ա-

սած, բնագդամբ. թէ ինչպիսի կանոնաւորութեամբ են գնում պարապմունքները, այդ երեւկայել դժւար չէ:

X.

Հարկաւոր եմ համարում ուսուցիչ-ուսուցչուհիներին տալ նաեւ շաբաթական որոշ դասացուցակ իւրաքանչիւր բաժանմունքի համար: Նրանք կարող են դասացուցակում դասերի դասաւորութիւնը փոխել ըստ իրենց հայեցողութեան ու յարմարութեան. դասերի ու դասամիջոցների թիւն ու տեղութիւնը խորհուրդ չեմ տալիս փոխել: Այդ բանում աւելի ձեռնհաս կարող է գտնուել ուսուցչական մի որ և է մեծ համագումար, որին պէտք է թողնել դասերի ու դասամիջոցների թիւի ու տեղութեան, ինչպէս և կրթական գործին վերաբերւող ուրիշ կարեւոր հարցերի մասին հեղինակաւոր որոշումներ կայացնելը: Պատասցուցակը կազմելիս հետեւել եմ մեր տարրական դպրոցների կանոնադրութեան ու ծրագրի վերեւ յիշած «Նախագծին», բայց հետեւել եմ ոչ կուրօրէն. «Նախագծի» պահանջներն ի նկատի եմ առել այն չափով, ինչ չափով թող են տւել ինձ այդ երկարամեայ փորձերը ու մեր տարրական դպրոցի իրականութեան հետ մօտիկ ծանօթ լինելս: Իմ դասացուցակների մէջ կան շեղումներ «Նախագծից» (թէ և

ոչ շատ խոշոր)՝ դասերի ու դասամիջոցների թիւն ու մանաւանդ նրանց տեղութեան վերաբերւող. այդ շեղումները ես անհրաժեշտ եմ գտել մասամբ մեր տարրական դպրոցների արդի իրականութեան շնորհով, որոնց խղճուկ նիւթականը հնարաւորութիւն չէ տալիս օրինակելի կերպով կազմակերպել նրանց: Եթէ իրական փորձերը պահանջում են շեղումներ «Նախագծից», որն իր շատ գնահատելի առաւելութիւններով (համեմատած մեր տարրական դպրոցների հին ծրագրի ու կանոնադրութեան հետ) հանդերձ ունի նաեւ աչքի ընկնող թերութիւններ, այն էլ ոչ սակաւաթիւ, թույլատրելի են այդ շեղումները, քանի որ «Նախագիծը» իր մէջ դեռ չի պարունակում մեր տարրական դպրոցների համար իսկական, կատարեալ կանոնադրութիւն ու ծրագիր. նա այդ ցանկալի կանոնադրութեան ու ծրագրի «Նախագիծն» է դեռ, կարօտ լուրջ փորձերի ու մանրազնին քննադատութեան մի շարք հեղինակաւոր ուսուցչական համագումարների կողմից: Գոյութիւն ունեցող տարրական դպրոցներում պարապելու իմ առաջարկած կարգն ու պայմաններն էլ նոյն կարօտութիւնն ունեն: Այդպիսի համագումարների բովում եփւելուց յետոյ միայն կանոնադրութեան ու ծրագրի գոյութիւնն ունեցող «Նախագիծը» կը դառնայ իսկական, կատարեալ կանոնադրութիւն ու ծրագիր, անպայման պարտաւոր մեր տարրա-

կան դպրոցների բոլոր ուսուցիչների ու ուսուցչուհիների համար: Մինչ այդ մեր դաստոռները պարտաւոր են էլի ղեկավարել նոյն «Նախագծով», քանի որ նրանից լաւը չը կայ այժմս, թոյլ տալով իրենց այնպիսի շեղումներ միայն, որոնք բղիտում են արդի իրականութեան ու տեղի ունեցող փոփոխութեան հարկադրական պահանջներից:

Հարկաւոր եմ համարում մեր տարրական դպրոցների դասատուներին առաջարկել մի բան ևս, շատ անհրաժեշտ կրթական գործի կանոնաւորութեան ու արդիւնաւէտութեան համար. պէտք է ուսումնական տարւայ ամեն մի քառորդը*) սկզբում որոշել. թէ իւրաքանչիւր դասախօսւող առարկայից ընդամենը քանի՞ դաս է լինելու ամբողջ քառորդի ընթացքում (այդ դժւար չէ անել, հաշւելով բանւորական օրերի թիւը. վերջինս կարելի է յայտնի դարձնել, հանելով քառորդը կազմող օրերի ընդհանուր թւից կիրակի ու տօն օրերի թիւը) ու լետոյ այդ դասերի թւի համեմատ որոշել քառորդում անցնելիք նիւթի քանակը գործադրող ծրագրի համաձայն: Անցնելիք նիւթի այդ որոշած քանակը պէտք է բաժանել ըստ դասերի, գրել այդ բոլորը յատուկ տետրակում,

*) Ինն ամսից բաղկացած ուսումնական տարին բաժանւում է չորս մասի կամ քառորդի, որոնցից երեքը տնում են երկու-երկու ամիս (իւրաքանչիւրը), իսկ չորրորդը, վերջինը, երեք ամիս:

իւրաքանչիւր դասի համար կազմել համառօտ կօնսպեկտ, ուրւագիծ. ամեն դասից առաջ նախապատրաստել այդ կօնսպեկտով ու լետոյ միայն մտնել դասատուն: Առանց այդպիսի նախապատրաստութեան, առանց անցնելիք նիւթի քանակը նախօրօք որոշելու գոնէ մի-երկու ամսւայ համար, առանց կօնսպեկտի, ուսուցիչը ստիպւած կը լինի միշտ խարխափել անորոշութեան մէջ, չունենալով մի որոշ, խորթ ու բորթութիւնները նախօրօք չգիտած, նպատակաւորմար ուղի. առանց այդպիսի ուղիի նա չէ կարող հասնել ցանկալի նպատակի. նա մի կերպ եօլա կը տանի, օր կը մթնացնի, բայց գործը ցանկալի արդիւնաւէտութեամբ տանել չէ կարող: Ծանր ու պատասխանատու է ուսուցչական աշխատանքը. նա պահանջում է ժամանակի, ոյժերի ու եռանդի մեծ գոհարերութիւն. նա պահանջում է նաև մի շատ գնահատելի, շատ թանկագին բան ուսուցչից, այն է՝ զաւաթախարակամութիւն. այդ պահանջը շատ հարկադրաբար է դնում հայ ժողովրդական ուսուցչի առաջին մանաւանդ մեր այսօրւայ, մեր արդի իրականութիւնը: Ով ընդունակ չէ զգում իրեն ուսուցչական պատասխանատու կոչման ու ուսուցչական ծանր աշխատանքի համար, նա այլ ասպարէզում պէտք է փնտրի իր համար գործ ու բարօրութիւն:

XI.

ԳՆՍԱՅՈՒՅԱԿ

միգրասեան (երեք բաժանմունքից բաղկացած ու մի դաստաու ունեցող) ծխական տարրական դպրոցի.

Ի-Ի ԲԱԺԱՆՄՈՒՆԵՐ

ա) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

1. Հայոց լեզու (45 րոպէ)
Դասամիջոց 10 րոպէ
2. Թւաբանութիւն (45 ր.)
Դասամիջոց 10 ր.
3. Իրազննութիւն (40 ր.)

բ) ԵՐԵՔՇԱԲԹԻ

1. Թւաբանութիւն
2. Հայոց լեզու
3. Վայելչագրութիւն

գ) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

1. Հայոց լեզու
2. Թւաբանութիւն
3. Նկարչութիւն

դ) ՀԻՆԳՇԱԲԹԻ

1. Հայոց լեզու
2. Կրօն
3. Երգեցողութիւն

ե) ՈՒՐԲԱԹ

1. Թւաբանութիւն
2. Հայոց լեզու
3. Վայելչագրութիւն

զ) ՇԱԲԱԹ

1. Հայոց լեզու
2. Թւաբանութիւն
3. Իրազննութիւն

Այդպիսով ամեն մի դասին ուսուցիչը նւիրում է 40—45 րոպէ, իսկ II-դ ու III-դի հետ խառը

ժամանակ նա հազիւ կարողանում է նւիրել 15 րոպէ, այն էլ ոչ անընդհատ:

ԻԻ-ԳԻ ՈՒ ԻԻԻ-ԳԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԵՐ

(միաժամանակ պարապմունքներով).

ա) ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

1. Հայոց լեզու (45 րոպէ)
Դասամիջոց 10 րոպէ
2. Թւաբանութիւն (45 ր.)
Դասամիջոց 10 ր.
3. Ռուսաց լեզու (40 ր.)
Դասամիջոց 10 ր.
4. Վայելչագրութիւն (40 ր.)

բ) ԵՐԵՔՇԱԲԹԻ

1. Թւաբանութիւն
2. Հայոց լեզու II-դում ու պատմութիւն III-դում
3. Ռուսաց լեզու
4. Իրազննութիւն II-դում ու բնագիտութիւն III-դում

3. Ռուսաց լեզու
4. Իրազննութիւն II-դում ու բնագիտութիւն III-դում
- գ) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

1. Հայոց լեզու
2. Կրօն

3. ԹՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ

- II-դում ու պատմութիւն III-դում
4. Նկարչութիւն

դ) ՀԻՆԳՇԱԲԹԻ

1. Հայոց լեզու
2. Թւաբանութիւն
3. Ռուսաց լեզու
4. Իրազննութիւն

II-դում ու բնագիտութիւն

III-դում

ե) ՈՒՐԲԱԹ

1. Հայոց լեզու
2. Թւաբանութիւն
3. Ռուսաց լեզու
4. Վայելչագրութիւն II-դում

նկարչութիւն ու բնագիտութիւն III-դում

գ) ՇԱՌԱԹ

1. Ռուսաց լեզու
2. Հայոց լեզու
3. Կրօն
4. Երգեցողութիւն

Դասի կէսը ուսուցիչը նւիրում է II-դ բաժանմունքին ու անմիջապէս պարապում նրա հետ, միւս կէսը նւիրում է III-դին ու նրա հետ էլ անմիջապէս պարապում նրա հերթին: Մի բաժանմունքի հետ անմիջապէս պարապելիս միւսին զբաղեցնում է որ և է գրաւորով. ցանկալի է, որ գրաւորը լինի այն առարկայից, որին նւիրած է դասը: Ռուսաց լեզուով գրել-կարդալը II-դ բաժանմունքում սկսւում է ուսումնական տարւայ երկրորդ կիսամեակի սկզբից. առաջի կիսամեակում աշակետներն զբաղւում են բերանացի վարժու թիւններով, սկսելով ռսերէն սովորելը շրջապատող առարկաների անուններից, ու այդպիսով նախապատրաստւում են գրել-կարդալու համար: Բերանացի վարժու թիւնների հետ զուգնթաց աշակետները սովորում են գրել ռուսաց տառերի տարրերը (элементы букв), տառերի մասնիկները. այդ գրաւորով վարժւում են այն ժամանակ, երբ ուսուցիչը ռուսաց լեզւի դասի ժամանակ անմիջապէս պարապում է III-դ բաժանմունքի հետ վերջինիս հերթին:

ԴԱՍԱՅՈՒՅԱԿ

երկդասեան (IV-դ ու V-դ բաժանմունքներից բաղկացած) ծխական տարրական դպրոցի, մի դասարանական սենեակում տեղաւորող ու մի ուսուցչով միաժամանակ պարապող.

IV-դ ու V-դ ԲԱԺԱՆՄՈՒՆԷՔ

ա) ԵՐԿՈՒՇԱԹԻ

1. Հայոց լեզու (55 րոպէ)
Դասամիջոց 15 րոպէ
2. Թւաբանութիւն (55 ր.)
Դասամիջոց 15 ր.
3. Պատմութիւն (55 ր.)
Դասամիջոց 50 ր.
4. Բնագիտութիւն (50 ր.)
Դասամիջոց 15 ր.
5. Նկարչութիւն (50 ր.)

բ) ԵՐԵՔՇԱԹԻ

1. Ռուսաց լեզու
2. Հայոց լեզու
3. Կրօն
4. Աշխարագրութիւն
5. Վայելչագրութիւն

գ) ՉՈՐԵՔՇԱԹԻ

1. Հայոց լեզու

2. Թւաբանութիւն

3. Ռուսաց լեզու

4. Պատմութիւն

5. Երգեցողութիւն

դ) ՀԻՆԳՇԱԹԻ

1. Հայոց լեզու

2. Ռուսաց լեզու

3. Թւաբանութիւն

4. Կրօն

5. Նկարչութիւն

ե) ՈՒՐԲԱԹ

1. Ռուսաց լեզու

2. Հայոց լեզու

3. Պատմութիւն

4. Երկրաչափական

Ձևագիտութիւն

5. Բնագիտութիւն

զ) ՇԱԲԱԹ

1. Հայոց լեզու
2. Ռուսաց լեզու
3. Բնագիտութիւն
4. Աշխարհագրութիւն
5. Երգեցողութիւն

Դասի կէսը ուսուցիչը նւիրում է IV-դ բաժանմունքին ու անմիջապէս պարապում նրա հետ ու միւս կէսը նւիրում V-դին ու նրա հետ էլ անմիջապէս պարապում իւր հերթին. մի բաժանմունքի հետ անմիջապէս պարապելիս միւսին զբաղեցնում է դրաւորով:

ԴԱՍԱՅՈՒՅԱԿ

Երեքգոտեան ծխական տարրական դպրոցի, մի բաժանմունքից կամ VI-դից բաղկացած:

ա) ԵՐԿՈՒՇԱԲԹ

Դասամիջոց (50 ը.)

- | | |
|----------------------------|----------------------------|
| 1. Հայոց լեզու (55 ըոպէ) | 4. Բնագիտութիւն (55 ը.) |
| Դասամիջոց 15 ըոպէ | |
| 2. Պատմութիւն (55 ը.) | Դասամիջոց (15 ը.) |
| Դասամիջոց 15 ը. | |
| 3. Աշխարհագրութիւն (55 ը.) | 5. Վայելչագրութիւն (50 ը.) |

բ) ԵՐԵՔՇԱԲԹ

3. Ռուսաց լեզու

- | | |
|---------------------------------------|---------------------------------------|
| 1. Ռուսաց լեզու | 4. Բնագիտութիւն |
| 2. Կրօն | 5. Կրօն |
| 3. Մարդակազմութիւն ու առողջապահութիւն | ե) ՈՒՐԲԱԹ |
| 4. Պատմութիւն | 1. Թւաբանութիւն |
| 5. Նկարչութիւն | 2. Հայոց լեզու |
| | 3. Ռուսաց լեզու |
| | 4. Պատմութիւն |
| | 5. Մարդակազմութիւն ու առողջապահութիւն |

զ) ՉՈՐԵՔՇԱԲԹ

- | | |
|------------------------------|------------------------------|
| 1. Հայոց լեզու | 3. Թւաբանութիւն |
| 2. Ռուսաց լեզու | 4. Աշխարհագրութիւն |
| 3. Թւաբանութիւն | 5. Երկրաչափական ձևագիտութիւն |
| 4. Աշխարհագրութիւն | զ) ՇԱԲԱԹ |
| 5. Երկրաչափական ձևագիտութիւն | 1. Հայոց լեզու |
| | 2. Ռուսաց լեզու |
| | 3. Պատմութիւն |
| | 4. Քաղաքացիական ուսմունք |
| | 5. Երգեցողութիւն |

դ) ՀԻՆԳՇԱԲԹ

- | | |
|-----------------|--|
| 1. Հայոց լեզու | |
| 2. Թւաբանութիւն | |


Քանի որ այդ դասատուները իրենից ամբողջովին ներկայացնում է մի բաժանմունք, ուսուցիչն էլ ամբողջովին նւիրում է նրան:

Շնորհիւ այդ նպաստաւոր պայմանի, գործն
այդ դասարանում կարող է առաջ ընթանալ կրկ-
նակի աջողութեամբ, քան նախնի ժամանակ-
ներում: Վերջիններիցս մնացած պակասութիւն-
ներն ու թերութիւնները այդ դասարանում կա-
րող են լրացնել, ուղղել ու չղիւել վերջնակա-
նապէս:

Ղարաբաղի Հայոց եկեղեցական ծխական
դպրոցների քեմական տեսուչ՝

ՍՏ. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ

Շուշի, 15-ին սեպտեմբերի
1908 թւի:



Թույլատրում եմ տպագրել 16 սեպտեմբերի 1908 թ. Շուշի.

Ղարաբաղի Թեմի Հայոց Առաջնորդ՝ ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL011364

